Արձանագրություն N 7
«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ա.Բաբաջանյան 4 **«08» «12» 2017թ**
ժ.12:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դ.Մակիչյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Մովսեսյանը,Ա.Եփրեմյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի_առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Դ.Մակիչյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, 01.12.2017թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում իրենց կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը ներկայացնելու, ինչպես նաև որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը մասին, որի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:

- 01.12.2017թ. Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 06.11.2017թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, արդյունքում ապրանքների տեխնիկական բնութագրերում արձանագրվել են որոշակի անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ,մասնավորապես.
- Հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, որը բաղկացած է երեք բաղադրիչներից.

1) էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ) - 1 հատ:
2) Պրոյեկտորի կախիչ (առաստաղին և պատին ամրացնելու, հնարավորությամբ) - 1 հատ
3) Պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լյումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար) - 1 հատ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նկարագիրը բաղկացած է 3 կետից.

ա) Թվային պրոյեկտոր NEC UM351Wi / Digital Projector NEC UM351Wi - 1 հատ (կախիչը ներառված);
բ) Գրատախտակ-1 հատ
գ) Ուսուցման ինտերակտիվ համակարգի տեղադրման համար անհրաժեշտ մալուխներ՝ Equip USB 2.0 ակտիվ երկարացման մալուխ 5մ - 1 հատ, Equip HDMI մալուխ M./M.,10մ-1 հատ.

Հրավերով պահանջվող կախիչի մասով տվյալներ առկա չեն և նշված չէ՝ այդ կախիչը նախատեսված է առաստաղին և պատին ամրացնելու համար, թե՝ ոչ:

Հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, այլ ոչ թե գրատախտակ:

2. Արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու մասին

(Դ.Մակիչյան)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

- Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, էլեկտրոնային եղանակով ծանուցել հրավերի պահանջների նկատմամբ ներկայացված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության վերաբերյալ՝ նրան առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները, որի կողմից սահմանված ժամկետնում շտկված տարբերակը չի ներկայացվել:

Գնահատման արդյունքները բերված են ստորև.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			Մասնակցի հայտի գնահատման արդյունքները
			Մասնակցի անվանումը
			«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
1	«Մասնակցության իրավունքը»չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
2	«Մասնագիտական փորձառության »չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
3	«Ֆինանսական միջոցներ» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
2	Ապրանքների ամբողջական նկարագիրը	Բավարար Անբավարար	անբավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	անբավարար

3. Գնանշման հարցման ընթացակարգի_առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի մերժման վերաբերյալ

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 04 մայիսի 2017թ. N 526-Ն ՀՀ կառավարության որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները՝

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

- Մերժել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը :
- «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:
-

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Դ.Մակիչյան
Անդամներ՝		Է.Մովսեսյան
		Ա.Եփրեմյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան